(I դասարան)

Չարաճճի մանուկի պես
Արևն է միշտ ժպտերես.
Մար ու դաշտը կանաչադարձ,
Բացվել է և կարմիր վարդ:

Գարուն է, սիրուն է
Ջան, ջան, ջան, ջան, ջան, ջան,
ջան:

Նախշուն ծառեր հազար ու բյուր
Չորս կողմից են յեկել հյուր, —
Թիթեռնիկներ ճանճ ու բղեղ
Թռչկոտում են ուր կուղես:

Գարուն է, սիրուն է,
Ջան, ջան, ջան, ջան, ջան, ջան,
ջան:

Պարտեզներում բոլոր ծառեր
Ծաղիկներ են բաց արել,

Շուտով կա կարմիր ամառ
Միրդ կրեքի մեղ համար:

Գարուն է սիրուն է,
Ջան, ջան, ջան, ջան, ջան, ջան,
ջան:

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Յերածշտ.՝ Դ. Ղազարյանի

Գ Ա Ր Ո Ւ Ն

(I դասարան)

Մենք առաջ շարժվենք
Իրար ձեռք բռնենք
Յերգենք լա, լա, լա,
Գարուն ե ահա:

Հիմի ել ջոկ-ջոկ
Մենք քայլենք անհոգ,
Ինչ քաղցր ե անուշ
Գարունը քնքուշ:

Արևը վառ-վառ,
Ծաղիկներ շար-շար,
Թռչուններ ճիկ-ճիկ
Ձրերը՝ չիկ-չիկ:

Ընկերներ՝ ամի-ամի
Մենք ել տանք ծախ-ծախ.
Յերգենք լա, լա, լա,
Շուշան ու լալա:

Խոսք՝ Հ. Կոստանյանի
Յերաժշտ.՝ Անտ. Մայիլյանի

ԳԱՐՈՒՆ ՅԵԿԱՎ

(Մանկապարտեզ և I դասարան)

Գարուն յեկավ,
Կանաչ հազավ,
Լե, լե, լե, լե,
Լե, լե, լե, լե,

Կանգնեց քարին
Յերգեց կաքավ,
Լե, լե, լե, լե,
Լե, լե, լե:

Բարև դարձան
Տաք արևին,
Բարև ծաղիկին,
Ծիլ տերևին:

Խոսք՝ Ժողովրդական
Յերաժշտ. մշակ.՝ Մլր. Միրզայանի

ՅԵԿԱՎ ԳԱՐՈՒՆ

(IV Գասարան)

Յեկավ զարուն, յեկան հավքեր,
Տաքցավ արև, գլխւն ջրեր,
Յեկան վարի-ցանքի որեր,
Յեկան վարի-ցանքի որեր:

Պոռնին ամոլ արեցի,
Սաղերն հորիկ լծեցի,
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,
Կաքաւն հացվոր բռնեցի,
Արտ ունեցի վարեցի,
Յորեն, զարի ցանեցի:

Խոսք՝ Ժողովրդական
Յերաժշտ.՝ Աղատ Մանուկյանի

ԴԵՌ ՈՒՐ Ե ԾԻԾԱՌ

(I—II Գասարան)

Դեռ ո՛ւր է ծիծառ,
Դեռ ո՛ւր է սոխակ,
Դարնան շողերով
Յեկավ մանուշակ:

Լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, ...

Յերկինքն է անամալ,
Շողշողուն արև,
Տանք մանուշակին,
Յերեխա՛յք, բարև:
Լա, լա, լա, ...

Խոսք. Ռ. Պատկանյանի.
Յերաժշտ.՝ Աղատ Մանուկյանի

ՅԵԿԱՎ ԳԱՐՈՒՆ

(IV Դասարան)

Յեկավ զարուն, յեկան հալքեր,
Տաքցավ արև, գլխերս ջրեր,
Յեկան վարի-ցանքի որեր,
Յեկան վարի-ցանքի որեր:

Կռռունկն ամուլ արեցի,
Սագերն հորիկ լծեցի,
Ճնճողուն հոտաղ վարձեցի,
Կաքավն հացվոր բռնեցի,
Արտ ունեյի վարեցի,
Յորեն, զարի ցանեցի:

Խոսք՝ Ժողովրդական
Յերաժշտ.՝ Ազատ Մանուկյանի

ԴԵՌՈՒՐ Ե ՇԻԾԱՌ

(I—II դասարան)

Դեռ ո՞ւր է ծիծառ,
Դեռ ո՞ւր է սոխակ,
Գարնան շողերով
Յեկավ մանուշակ:

Լա, Լա, Լա, Լա, Լա,
Լա, Լա, Լա, Լա, Լա,
Լա, Լա, Լա, Լա, Լա,
Լա, Լա, Լա, ...

Յերկինքն է անամպ,
Շողշողուն արև,
Տանք մանուշակին,
Յերեխա՛յք, բարև:
Լա, Լա, Լա, ...

Խոսք. Ռ. Պատկանյանի.
Յերաժշտ.՝ Ազատ Մանուկյանի

Մ Ա Յ Ի Ս

(I—II դասարան)

Այլ ու արլան վառ մայիս,
Դու ամենից լավ ամիս
Կյանք ու արեւ ես տալիս
Ի՞նչ սիրում ես, ջան մայիս:

Հանդ ու այգի դարդարուն,
Հովն ե խաղում դաշտերում,
Թռչուններն են քեզ դովում
Ի՞նչ նաչխունն ես, ջան մայիս:

Դու կայտառ ես մանկան պես
Թռչնան ու խնդերես,
Ի՞նչ կլլինի, վոր բերես
Վողջ աշխարհին ա՛յլ մայիս:

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Յերաժշտ.՝ Սեթ Վոսկանյանի

Խ Ա Ռ Ն Յ Ե Ր Գ Ե Ր

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՆԿՑՈՒՆ

(Մանկապ. 5 տարեկաններին համար)

Փոքրիկ անկյուն յես ունեմ
Մեր սենյակի մի մասում
Նկարում եմ, զարդարում,
Այնտեղ նստում ու խաղում:

Ունեմ աթոռ, մահճակալ,
Սփսե, սրբիչ ու սեղան
Աշխատում եմ ամեն օր
Վոչ վոքին չեմ խանդարում:

Խոսք՝ Հ. Գալիկյանի
Յեբախա՝ Ս. Գալիկյանի

ԼԵՆԻՆ ՊԱՊԻՆ

(Մանկապարտեզի 5 տարեկանի համար)

Լենին սլապին ել
Մանուկ ե յեղել.
Մեղ նման սլստիկ,
Ժիր ու սիրտունիկ:

Բռնել ե թիթեռ,
Սիրել ծաղիկներ,
Սահնակով սղալ,
Յերգել ու խաղալ:

Բայց յերգ ու սլաբից,
Սահնակ, թիթեռից,
Ծաղիկց առավել,
Ուսումն ե սիրել:

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Յերաժշտ.՝ Ս. Գալեկյանի
Ճախադարձական յերգեր:

ՓՈՔՐԻԿ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

(Մանկապարտեզ և I դասարան)

Նոնիկ, Նոնիկ, ի՞նչ ես կարում:
— Ռադմի գլխարկ:
— Ո՞ւմ սլիտի տաս:—Մեր Միչիկին:
— Ի՞նչ անի նա:—Դնի գլխին,
Վոր նա դառնա բանակային—քաջ:

Միչիկ, Միչիկ, ո՞ւր ես դնում:
— Մեր սահմանը:
— Մեր սահմանը:
— Ի՞նչ անելու:—Պաշտպանելու:
— Ո՞վ ե սպառնում:
— Բուրժույները. թե վոր կդան,
գլխին կտամ—կա՛ց:

Խոսք՝ Մ. Միրզայանի
Յերաժշտ.՝ Գուրգեն Միրզայանի

Տ Ի Կ Ն Ի Կ

(I դասարան)

Տիկ, տիկ, տիկ, սիրունիկ,
Նախաշուն, խելոք, իմ տիկնիկ.
Տես, տես, տես, իմ յերես—ծի'կ.
Տես, տես, տես, իմ յերես—ծի'կ:

Վեր, վեր, վեր, կաթ տամ կեր
Վե'ր, չուտ հագիր քո շորեր,
Ձիկ, չիկ, չիկ, տուր պաչիկ,—չի'կ
Ձիկ, չիկ, չիկ, տուր պաչիկ,—չի'կ:

Լա, լա, լա, իմ բալա,
Թռի, թռչենք ել մի լա,
Չան, ջան, ջան, հողի ջան—ճո'ւկ.
Չան, ջան, ջան, հողի ջան—ճո'ւկ:

Խոսք՝ Արդ. Գեղորդյանի
Յերաժշտ.՝ Մնտ. Մայիլյանի

Պ Ա Պ Ա Ր

(I դասարան)

Պապար, պապար սիրուն ջան,
Ձենիդ մատաղ կըչկըջան.
Լա, լա, լա, լա, լա, լա, լա,
Ձենիդ մատաղ կըչկըջան:

Պապար արա զորանաս,
Լացն ու կոծը մոռանաս.
Լա, լա, լա, լա, լա, լա, լա,
Լացն ու կոծը մոռանաս:

Յերկու թխիկ թաթերով
Ծածափ արա, համ պապար,
Լա լա լա լա, լա, լա, լա,
Ծածափ արա համ պապար:

Եդ քու թըմիլիկ տոտերով
Համ թըռլըռա, համ ծածառ.
Լա, լա, լա, լա, լա, լա, լա,
Համ թըռլըռա, համ ծածառ:

Ուրախ տրուի մեծանաս,
Կարմիր արև ունենաս.
Լա, լա, լա, լա, լա, լա, լա,
Կարմիր արև ունենաս:

Խոսք՝ Հակ. Աղաբաբի
Յերածշտ.՝ Վ. Ումբ-չատի

Դ Ա Ն Դ Ա Ն Ի

(1 դասարան)

Հա՛ դան դանի, դան դանի,
Նանը չարդ կտանի.
Կանդնի, բալա, ծառ արա,
Իմ ծնկանը թառ արա:

Հա՛ դան դանի, դան դանի,
Աչքի լուսն ես քո նանի.
Մեր մուկը տան ճրագն ես,
Մեր տան վառած կրակն ես:

Հա՛ դան դանի, դան դանի,
Հրեա բայտս ծառ կանի.
Մատաղ ըլիմ քաջ բալին,
Ծառ անեկիս չի լալիս:

Խոսք՝ Հակ. Աղաբաբի
Յերածշտ.՝ Վ. Ումբ-չատի

ԾԱՓԻԿ ԾԱՓԻԿ

(I դասարան)

Ծափիկ-ծափիկ ծիրանի,
Կարժիր խնձոր նմանի,
Վոսկե դանդուր մաղերը
Հովը թել-թել կտանի:

Փրսուսավոր աղալնի,
Վառ-վառ վարդի նմանի,
Զյունից ճերմակ թաթիկներ
Կուզեն վոսկի մատանի:

Խոսք և յերաժշտ.
Ժողովրդական

ՓԱՅՏԵ ՁԻ

(I դասարան)

Հո'սլ թըռի', թըռի իմ ձի,
Զըտաս միայն աբացի,
Դու թըռչուն ես թևավոր,
Յեռ ել կտրիճ ձիավոր:

Թե առ, թըռիր, սըլանանք,
Հեռու, հեռու հեռանանք,
Դե չուտ արա', դե', թըռչենք,
Արար աշխարհ յեկ շրջենք:

Թարգմ.՝ Խնկո Աղոր
Յերաժշտ.՝ Ն. Պոստոլովսկու

Դեռ արեւը չծաղած,
Յես շորերս եմ միշտ հաղած.
Պիտներ եմ յես միշտ զղաստ,
Ու իմ գործին միշտ պատրաստ:

Ինձ համար յես առանձին
Ունեմ վոշի ու վրձին,
Լվանում եմ յես ամեն ուր
Բերան, ատամ կամ ավոր:

Պիտներ ենք մեզ պարծանք,
Սմենորյա խաղ մարզանք.
Գայլերթում ենք մենք մեկ, յերկու՝
Հետեւելով մեկ մեկու:

Ծաղեց, կանչեց ալ արեւ,
— Պիտներն եր ձեզ բարեւ.
Զրվեժների տակ լողացե՛ք,
Շողերիս տակ շողացե՛ք:

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Յերածշտ.՝ Մ. Միրզայանի

«Նախադարձականի
յերգերն ու խաղերը» Միք. Միրզայան

ԱՐԵՎ, ԱՐԵՎ

(I դաստրամ)

Արեւ, արեւ, յեկ յեկ,
Զիղի քարին վե՛ր յեկ,
Սե-սե ամպեր հեռացե՛ք
Արեւին ճամբա բացե՛ք:

Թողեք վոր դա մեզ մոտ,
Նըրա լուսին ենք կարոտ.
Կարմիր արեւ յե՛կ յե՛կ,
Զիղի քարին վեր յեկ:

Խոսք՝ Ղազ. Աղայանի
«Դպրացական յերգեր» Ռ. Մելիքյանի

ԴԱՐՔԻՆՆԵՐ

(I դասարան)

Թա՛ք, թի՛ թա՛ք, թա՛ք թի՛ թա՛ք,
 Ձա՛րկ դե՛ զա՛րկ, դե՛ զա՛րկ, զա՛րկ.
 Մենք դարբին ենք վարժ վարպետ,
 Գործ ենք անում իրար հետ—
 Ձենք խնայում ուժը մեր,
 Ձա՛րկ, զա՛րկ, դե՛ վրա բե՛ր...

Թա՛ք, թի՛ թա՛ք, թա՛ք թի՛ թա՛ք,
 Ձա՛րկ դե՛ զա՛րկ, դե՛ զա՛րկ, զա՛րկ.
 Մեր սրապերն ու հայրերը
 Նույնպես դարբին են յեղեղ
 Ձեն խնայել ուժ, ձեռքեր,
 Ձարկել են հա՛ թաք...

Թա՛ք, թի՛ թա՛ք, թա՛ք, թի՛ թա՛ք,
 Ձա՛րկ դե՛ զա՛րկ, դե՛ զա՛րկ, զա՛րկ.
 Հե՛յ դուք, հեռու դարբիններ,
 Միացե՛ք ջահել ու ծեր,
 Մի՛ խնայե՛ք ուժը ձեր,
 Դուք ել՛ զարկե՛ք թաք...

Յերածա՛. Ս. Կլաչկոյի

Տ Ր Ա Կ Տ Ո Ր

(I դասարան)

Հե՛յ, ջան, տրակտոր ջան,
 Բեղ ե՛ մեռւմ մեր դաշտը,
 Կոլխոզի բանվոր վաշտը.
 Յե՛կ մեր արտերը վարի,
 Բամբակ ցանենք ես տարի:

Մեր վոլխոզը նոր ե, նոր,
 Բոյ ե քաշում որեց որ,
 Ունենք յերկաթե տրակտոր.
 Դյուղից քշենք կուլակին,
 Սռաջ քաշենք բատրակին:

Խոսք ե յերածա՛. Մ. Միրզայանի
 «Հոկտեմբերիկների յերգերի ժողովածու»

ԲԵՐՔԻ ՏՈՆ

(I դասարան)

Բերքի տոն ջան, բերքի տոն,
Աշխատանքի յերգի տոն.
Բերքի տոն ջան, հե՛յ, բերքի տոն,
Աշխատանքի, յերգի տոն:

Հովտեմբերիկ ընկերներ,
Հովտեմբերից ձեզ նվեր.
Բերքի տոն ջան, հե՛յ, բերքի տոն,
Աշխատանքի, յերգի տոն:

Յերդենք, դովենք ալիւ-բաղ,
Ծառապտուղ՝ ծառից կախ.
Բերքի տոն ջան, հե՛յ, բերքի տոն,
Աշխատանքի, յերգի տոն:

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերածչտ.՝ Մեք. Միրզայանի

ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

(Մեմբրգ I դասարան)

Կրկին աչուն, ալիւն նախչուն,
Մեր կոլխողի ծառերից
Թուղ ու խաղող, տանձ մեղրածոր
Ճիտ են անում և մեզ կանչում:

Ընկերներով սիրուն այգում
Հասուն մրգեր հավաքում,
Ողնում, բանում մեր կոլխողում
Միրգ հավաքում և յերգում:

Ջան, ջան աչուն, շորը նախչուն
Ի՛նչ սիրուն են, անմամն,
Ի՛նչ ուրախ ենք, վոր դու յեկար
Անուշ մրգեր դու մեզ բերիր:

Խոսք՝ Հ. Հալբախյանի
Յերածչտ.՝ Ս. Գալիկյանի

ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏԵՐԸ

(I դասարան)

Վողջուն անծայր բամբակի
արտերին,
Սպիտակ վարդերի ծառն ծովերին.
Վողջուն ձյունի պես ճերմակ
բամբակին,
Կոխողի արտում բանող բանակին:

Խոսք՝ Ա. Սրտոյանի
Յերափշտ.՝ Ս. Գալիկյանի

ՊԻՈՆԵՐ ՄՈՍԻՆ

(I դասարան)

Պիոներ ե մեր Մոսին,
Կարմիր վղկապը ուսին,
Ման ե դալիս քաջի պես,
Համարձակ ու ժպտերես:

Նա դնում ե մարդանքի,
Ծով ե մաքի ու խելքի,
Դաս ե կարդում ջրի պես,
Միշտ մաքուր ե շոր-յերես:

Պիոներ ե մեր Մոսին,
Կարմիր վղկապը ուսին,
Ման ե դալիս քաջի պես,
Համարձակ ու ժպտերես:

Խոսք՝ Հ. Հայրապետյանի
Յերափշտ.՝ Ստ. Դեմուրյանի
«Հոկտեմբերիկների յերգերի ժողովածու»

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԻԿ

(I դասարան)

Կարմիր վարդիկ սիրունիկ,
Իրիկուն ե, հանդարտ, զով,
Քո կուրծքի բաց, անուշիկ,
Յողն իջնի կրծքիդ քով:

Լե, լե լե լե, լե լե լե—
Լե, լե, լե, լե, լե, լե, լե:

Առավոտուն արև դա,
Թերթիկներդ համբուրե,
Ակունքներով շողշողա,
Ծաղքերդ բաց ու բուրե:

Լե, լե, լե.....

Կարմիր վարդիկ սիրունիկ,
Յերբ դու լինես դալիազար,
Քամին կասե քեզ նանիկ,
Քնիր անուշ քեզ համար:

Լե, լե, լե.....

Խոսք՝ Հովհ. Կոստանյանի
Յերթաշտ. Անտոն Մայիլյանի

ՅԵՐԳ ԿԱՌՈՒՑՄԱՆ

(III—IV դասարան)

Քարը՝ քարի,
Դարը՝ դարի,
Ուր ենք հասել հիմա մենք.
Մեծ պայքարի վողով արի
Դարն ենք կերտում հիմա մենք:

Յեղիր անաչ,
Մոռացիր մահ
Կառուցման մեծ ճակատում.
Լսիր, ահա
Ճամբի վրա
Նոր արևներ են ծագում:

Քարը՝ քարի,
Կամքով արի,
Կառուցում ենք կյանքը մեր,
Նոր աշխարհի
Լույսը վառի,
Իմ բարեկամ, իմ ընկեր:

Յեղիբ տողում,
Թող քո հողում
Հույսը յերբեք չմարի.
Ձեռքիդ դրած
Գո մի քարը
Հավասար ե մի դարի:

Խոսք՝ Դ. Սարգսնի
Յերաժշտ.՝ Ա. Ներսիսյանի

Շ Ո Ղ Ե Ր Ի Ն

(III—IV դասարան)

Մաշինեն քաշել եմ վարի
Կոլեկտիվ հողերում անձիր,
Շողեր ջան, ուշացար, ո՛ւր ես
Յե՛կ ջանս, յե՛կ, նաղ մի անի:

Հե՛յ ջան, հե՛յ ջան, տրակտոր
վարի.

Դուրս յելավ Շողերս հանդից,
Պողպատե ընկերս, վարի
Վար անենք շուտ դուրս գանք
հանդից:

Շողերս՝ աչքերը մթին,
Շողերս՝ ունքերը լուսին,
Շողեր ջան, յե՛կ, բունենք եշխով
Կոլեկտիվ նոր կյանքի ուղին:

Խոսք՝ Հով. Մելիքյանի
Յերաժշտ.՝ Աղաս Մանուկյանի

Լ ՈՒ Ս Ի Ն

(II—III դասարան)

Լուսինն ելավ են սարից,
Մարի բարձր կատարից,
Շեկլիկ-մեկլիկ յերեսով
Փռեց զեանին լուսսի ծով:

Ջան, ա՛յ լուսին,
Ջան քո լուսին,
Ջան քո կլոր
Շեկ յերեսին:

Խալարն իսկույն չքացավ
Ու ել զեանին չկացավ,
Լուսնի լուսից հալածված՝
Խոր ձորերի մեջ մնաց:

Ջա՛ն, ա՛յ լուսին,
Ջա՛ն քո լուսին,
Ջա՛ն քո կլոր
Շեկ յերեսին:

Խոսք՝ Հակ. Աղաբաբի
Ա. Մանուկյանի
Յերաթշտ.՝ Ռոմ. Մեխրյանի
Վահ. Ումր-Շաաթի

ԱՅՍՈՐ ԲՈՍՈՐ

(III դասարան)

Այսոր բոսոր մեր կյանքի
Ջահն ե վառված ամենուր,
Մոտ ու հեռու ամենքի
Սիրտն ե թնդում անմրմուռ:

Հաղթել, հասել ենք արդեն
Մեր դարերի տենչածին,—
Մեր ալ ու լալ դարունին,
Մեր արեին հրածին:

Ել մենք չունենք փակ լեղու,
Կապած աչքեր՝ մթադնած,
Անծայր աշխարհ մեր առջև
Փռնջ ծաղիկ ե նոր ծլած:

Յեկեք մեր հեղ ու հյուծված,
Տանջված, քույրեր ընչագուրկ,
Հանքից, հյուղից մուխ ու թաց,
Գրկենք իրար անարցունք:

Խոսք՝ Վ. Աղասյանի
Յերաթշտ.՝ մշակ՝ Ռոմ. Մեխրյանի

ԿԱՆՈՆՆԵՐ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԹԵԹԵՎ, ՈՒ ԹԵԹԵՎ,

(III—IV դասարան)

ԹԵԹԵՆ ու ԹԵԹԵՆ
Բռնած իրար ԹԵՆ
Պարում եր Անոն,
Պարում եր Մանոն:

Շողիկ ու Յողիկ,
Վաչիկ ու Խաչիկ,
Սուրիկ ու Նուրիկ,
Ոննիկ ու Սոնիկ,
Եւ չը դիմացան
Իրարով անցան—
Տըվին ԹԵ—ԹԵԼԻ
Թըռան վերվերի:

Խոսք՝ Ա. Խնկրյանի
Յերափշտ.՝ Ֆ. Շպէյերի

Ո Ր Ո Ր

(III—VI դասարան)

Նանիկ արա, անուշ բալիկ,
Հովի-դովի թևի տակ.
Սիրուն դեմքիդ վարդ ե բացվել
Նանա, նանա, իմ հողյակ

Մտավ արևն իր մոր դիրկը,
Յեղան աստղեր ու լուսին.
Աստղ ու լուսին զով հովի հետ
Նանա, նանա քեզ ասին:

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերաժշտ.՝ Գուրգեն Միրզոյանի
Նույնը իրրե կանոն-յերաժշտ.
Մ. Անցևի

ԶՈՒՔՎԱԾ, ԶԱՐԴԱՐՎԱԾ

(III—VI դասարան)

Զուգված, զարդարված,
Թավիչ կանաչով
Ֆոլում են դաշտեր
Վոսկի ճաճանչով:

Մայիսը սիրուն
Գոհար ե մաղել,
Թերթերը ծաղկանց
Ֆողով չաղակնել:

Հաղար հաղարով
Թռչուն ե յերդամ—
Դաշտերը կանաչ
Զրնդում—դրրնդում:

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերաժշտ.՝ Ռ. Յինգլերի

ԶՈՒԿՆ Ե ԼՈՂՈՒՄ

(III—VI դասարան)

Զուկն ե լողում վճիտ ջրում,
վճիտ ջրում լճակի,
վառ արևի շողերի տակ
Ֆոլք ե տալիս արծաթի:

Հա՛ սուրում ե, հա՛ սուղվում ե
Բյուրեղ ծոցը լճակի,
Բյուր նաղանքով մեղմ
փարվում ե
Պուտ-պուտ թևին կոհակի:

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերաժշտ.՝ Մ. Անցեի

Ք Ա Յ Լ Ե Ր Գ

(III—VI դասարան)

Ուղիղ կարգով,
Կանգնենք շարքով
Շարժվենք վաշտ-վաշտ
Մենք դեպի դաշտ—

Մե՛կ, յե՛րկու
Մի ձախ, մի աջ
Մե՛կ, յե՛րկու
Դեպի առաջ...

Վարժվենք, շարժվենք,
Ընկեր անդին,
Լինենք պաշտպան
Հայրենիքին—

Մե՛կ, յե՛րկու
Մի ձախ, մի աջ,
Մե՛կ, յե՛րկու
Դեպի առաջ...

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերաժշտ.՝ Ֆ. Շպեյերի

ՍԱՐԻ ԼԱՆՋԸ

(III—VI դարերում)

Սարի լանջը մահճակալ,
Չեչոտ քարը դլխակալ,
Մի հին կարպետ ուսերին,—
Այս ե հովվի անկողին:

Յերբ անձրևը կաթկաթում
Յերբ կարպետը թրխկթխկում,
Հովիվն անուշ ընի մեջ
Քաղցր յերազ ե տեսնում:

Երբ՝ Ղ. Աղայանի
Յերաժշտ.՝ Ռոմ. Մելիքյանի

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն

ՍԱՐԻ ԼԱՆՁԸ

(III—VI դասարան)

Սարի լանջը մահճակալ,
Ձեռոտ քարը դլխակալ,
Մի հին կարպետ ուսերին,—
Այս ե հովվի անկողին:

Յերբ անձրևը կաթկաթում
Յերբ կարպետը թրխկթխկում,
Հովվին անուշ քնի մեջ
Քաղցր յերազ ե տեսնում:

Խոսք՝ Ղ. Աղայանի
Յերաթշա՝ Ռոմ. Մելիքյանի

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն

Զ Ո Ւ Լ Ո

(III դասարան)

Արեն յեւով կամար-կամար,
Զուլոն կայեց վոսկի քամար,
Յես կը մեռնեմ քեզի համար,
Հովա՛ր Զուլո, մաղա՛թ Զուլո:

Հովա՛ր Զուլո, Զուլո,
Մատաղ Զուլո ջան:

Դու դաշտ կուգաս հուլա, հուլա,
Կնամնիս բամբկի քուլա,
Աչքըս տեսաւ, սիրտս կուլա,
Հովա՛ր Զուլո, մաղա՛թ Զուլո:

Հովա՛ր Զուլո, Զուլո,
Մատաղ Զուլո ջան:

Մեր ջուխտ գութան դաշտ կրանի,
Զուլո խանութ հաց կըտանի,
Աչքով ունքով մարդ կսպանի,
Հովա՛ր Զուլո, մաղա՛թ Զուլո

Հովա՛ր Զուլո, Զուլո,
Մաղա՛թ Զուլո, ջան:

Խոսք և յերաժշտ. ժողովրդական

Ո՛Յ ՄԱՐԱԼ

III—VI դասարան)

Կաքավի պես ման կուղաս, մարալ ջան
Կնամանես ջեյրի խնձոր մարալ ջան
Մարալ, մարալ, մարալ ջան.
Մարալ, մարալ ջան.

Իջնենք չայիրները բռնենք ծանր
սլար,
Մարալ ջան.

Ո՛յ մարալ, մարալ, մարալ,
մարալ,
Մարալ, մարալ ջան.

Սարեր յետ դնացեք իմ յարը թող դա
Մարալ ջան.

Ո՛յ մարալ, մարալ, մարալ,
մարալ,

Մարալ, մարալ ջան.

Խոսք և յերաժշտ.՝ Ժողովրդական
Մշակում՝ Ա. Տ. Ղևոնդյանի
«Յերգեր և ումաններ»

ՋԱՆ ԳՅՈՒԼՈՒՄ

(III IV դասարան)

Արևը կամար—կամար
Ջան դյուլում, ջան, ջան.
Կասկե ևս վոսկի քամար,
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Հիսուն որ խաղ եմ ասել,
Ջան դյուլում, ջան, ջան.
Իմ ախպոր ճամբի համար,
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Իմ ախպերը սարումն ա,
Շվին դոսկածալումն ա,
Ախպեր ջան, շվիդ ածա,
Բուրդ Լուլա քարումն ա:

Խոսք և յերաժշտ.՝ Ժողովրդական

ՀՈՅ ՆԱԶԱՆ

(III—VI դասարան)

Հո՛ր, Նաղան իմ, Նաղան իմ,
Ջա՛ն, Նաղան իմ, Նաղան իմ,

Նաղա՛ն, դու բարով յեկար,
Կանաչ սարերով յեկար,
Կարմիր սուրբով յեկար:

Ծաղիկ ես, ծաղիկ պուտ ես,
Շողշողիկ ալ-յաղութեւ,

Նաղան, դու բարով յեկար,
Կանաչ սարերով յեկար,
Կարմիր սուրբով յեկար:

Նրխչուն ես՝ թիթեռնիկ ես,
Ծրլլըլան ծիծեռնիկ ես,
Նաղան.....

Աղբյուր ես, աղբրի ալ ես,
Քրչըրչան պարզ կոհակ ես,
Նաղան.....

Ծաղիկ ես, ծաղկեիունջ ես,
Աղջիկ ես, քաղցրաչունջ ես,
Նաղան.....

Վասիլի յես, վասկեհատ ես,
Նաղան իմ, դու մի հատ ես,
Նաղան.....

Խոսք և յերաժշտ.՝ Ժողովրդական
Կարա Մուրզայի

Մշակում՝ Կոմիտասի
Գր. Սյունիի

«Ժող. յերգեր» կոմիտաս
«Աղբյուրական յերգեր» Ռ. Մելիքյան

ԱՐԱԳԻԼ ԲԱՐՈՎ ՅԵԿԱՐ

(I—II դարարամ)

Արաղիլ, բարով յեկար,
Հե՛յ, արաղիլ, բարով յեկար.
Դու մեզ զարնան նշան բերիր,
Մեր սրտերը ուրախ արիր:

Արաղիլ, յերբ զնացիր,
Դու մեղանից յերբ զնացիր,
Հա՛ փչեցին բուք ու բորան,
Ծաղիկները ամեն կտրան:

Ոռք և յերաժշտ.՝ ժողովրդական

ԻՆՁՈՒ ԲԻՆԳՅՈՒԼ ՄՏԱՐ

(IV—VI դարարամ)

Ինչո՞ւ Բինդյուլը մտար, դըլե Մկոն
դե,

Բաղի բըլբուլը դտար, Այիոն
թըխկոնդե,

Թըխկոն, թըխկոն, թըխկոնդե,

Այիոն կոնդե, թըխկոնդե,

Դըլե Մկոնդե, ալիոն թըխկոնդե.

Սուսան սըմբուլ, բաղի բըլբուլ.

Ինչո՞ւ Բինդյուլը մտար, դըլե
Մկոնդե,

Այիոն թըխկոնդե:

Ոռք և յերաժշտ.՝ ժողովրդական
Կոմիտասի

Մշակութ.՝ Ռոմ. Մեղիքյանի

Սոլ. Մեղիքյանի

կտա ու կես կորեկ ունեմ ցանելու
Համար,
Ճնճղուկներ թռան յեկան ուտելու
Համար,
Կռացա, քար վեր առա, դարկելու
Համար.
Սէյ, ճնճղուկիկ, կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ, ուտեն կուտիկ,
Խմեն ջրիկ, առլի յեզրիկ,
Պստիկ-մստիկ...
Փախան, յերթան ման գալու Համար:

Հասարակ զանակ բերին մորթելու
 Համար,
 Աղջիկներ թե քաջեցին փետրելու
 Համար,
 Պառավներ պղինձ դրին յեփելու
 Համար.
 Այ՛, ճնճողակիկ, կարմիր տոտիկ...

Խոսք և յեքաժշտ.՝ ժողովրդական
Մշակում.՝ Կոմիտասի
Ռոմ. Մելիքյանի

ՇՈՂԵՐ

(VI Դասարան)

Ամպելա, ձյուն չի գալի, Շոգեր Զան
Սարկեցը տուն չի գալի, Շոգեր Զան.
Դու չորորա, դուն չորորա, Շոգեր
Զան.
Ամպի տակին ձուն կերեա, Շոգեր
Զան:

Սիրտս կրակով լցված, Շողեր Զան.
Աչքերիս քունն չի դալի, Շողեր Զան.
Դու շորորա, դուն որորա, Շողեր
Զան.
Ամպի տակին ձուն կերևա, Շողեր
Զան:

Խոսք և յերաժշտ.՝ ժողովրդական
Մշակում՝ Կոմիտասի

ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

(V—VI դարերում)

Լուսնակն անուշ, հովն անուշ .

Վայ լե լե, լե լե,

Վայ լե լե, լե լե :

Շինականի քունն անուշ :

Յերնեկ են որեր,

Վոր կենենք սարեր :

Ծաղեց լուսնակն յերկընուց .

Վայ լե լե, լե լե,

Վայ լե լե, լե լե :

Հովիվի վողն եր անուշ :

Յերնեկ են որեր,

Վոր կենենք սարեր :

Խոսք և յերաժշտ . Ժողովրդակոհ

Մշակում Կոմիտասի

Մ Ե Ն Ե Ր Գ Ն Ե Ր

Խ Մ Բ Ե Ր Գ Ն Ե Ր

ՍԵՎ, ԿԱՔԱՎԻԿ

(V—VI դասարան)

Վա՛յ կաքավիկ, սե՛վ կաքավիկ,
Չալիկ մալիկ սիրուն հավիկ,
Վա՛յ քո ճռւտին, են խորոտին,
Վա՛յ սգավոր իր մոր սրտին:

Կրկնել:

Եւ չես կարդում հանդ ու արտում
Մեր սարերից կերթաս տրտում.
Վա՛յ կաքավիկ, սե կաքավիկ
Վա՛յ իմ կորած սիրուն հավիկ:

Կրկնել:

Խոսք՝ Հովհ. Թումանյանի
Յերաթշա՝ Ռոմ. Մելիքյանի

«Զմրուխտի յերգեր»

Դեղեցիկ հոտավետ,
Դու ծաղիկ լեռնային,
Ո՞ր՞ամ համար դու բուսար,
Ո՞ր՞ամ համար ծաղկեցիր...

Յրտերո՞ւմ մեծացար
Անխնամ մեն-մենակ,
Մի լավ որ չտեսար
Վորբի պես տարադիր...

Ու անցավ կյանքը քո
Սղալնոր տխրադին,
Դեղեցիկ հոտավետ,
Դու ծաղիկ լեռնային...

Խոսք՝ Լ. Մանվելյանի
Յերաժշտ.՝ Ռոմ. Մելիքյանի
«Աշնան տաղեր»

«Յերդեր և ռոմաններ»
Ա. Սպենդիարյան
Ա. Տեր-Ղեկունյան
Ռոմ. Մելիքյան

Աղվեսը պառկեց աղբի տակին
Վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ,
Աչքը ձգեց չալ հավի ձաղին
Վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ,
Նետով կտամ աչքի տակին
Վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ,
Վոր մոտ չդա նա մեր ձաղին
Վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ:

Աղվեսն եկավ խունջիկ, մունջիկ,
Պոչի ծերը սիրուն վնջիկ,
Այ իմ ճուտեր,
Սիրուն ճուտեր,
Նախշուն ճուտեր,
Թմրլա ճուտեր,
Վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ,
Վո՞ւյ, վո՞ւյ:

Խոսք՝ Ժողովրդական
Յերաժշտ.՝ Մշակ՝ Ռոմ. Մելիքյանի
Աղաա Մանուկյանի

Փռքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մտտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասաց.—Քեզ կարկեմ,
Այ, կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասաց.—Տե՛ս, կը ծակեմ,
Վոր չը մոռնաս փրչոտ վարդին.
Փրչոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան սրկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փռչը նրա ձեռքը ծակեց,
Բայց եւ չոգնեց քրնքուշ վարդին.
Քրնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Խոսք.—Գյոթեյի,
Թարգմ.—Հ. Թումանյանի.
Յերածշտ.—Ռոմ. Մելիքյանի

(V—VI դասարան)

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ
Միտուն աղջիկ եմ
Վարդի վնջիկ եմ—տո՛ւյ, տո՛ւյ,
Տոյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ.
Վոսկեղոծ մազիկ,
Կարասի վրիկ—տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ:
Կրկնել.

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ
Մի բուռ կրակ եմ.
Մութ տան ճրագ եմ տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ.
Իմ սիրան ե խոստամ
Յես յերդ եմ ասում—տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ:
Կրկնել.

Խոսք՝ Ա. Խնկոյանի
Յերածշտ.—Ռոմ. Մելիքյանի

Յ Ե Ա Լ Լ Ի

(V—VI դասարան)

Վշիտ հուրունք լիշարեմ
Հե՛յ, աման այ յեալի,
Յեալիս խալիչա կըկարեմ
Ձանբմ աման, այ յեալի:

Հե՛յ, չընի ինձնից նեղանաս,
Խառ թեկերով կըկարեմ,
Հեյ աման, այ յեալի
Ձանբմ աման, այ յեալի:

Խունջիկ մունջիկ կաքավ ես,
Դու Մեյսարի մարալ ես,
Լեղուդ շիրին Շիրվանի,
Տե՛ս, խոստումդ կատարի:
Հե՛յ,

Ձեն ձենի տանք, ա՛յ արսլեր,
Ձեռքիդ ուժ տուր, այ վարպետ,
Վոր Մեյսարին մեղի տա
Խառ խալիչա ու կարպետ:
Հե՛յ,

Խոսք և յերաժշտ.՝ Անտոն Մայիլյանի
«Սաֆա» օպերայից

ՄԱՆՈՒՇԱԿ

(Խմբերգ IV—VI դասարան)

Կապույտ գլխով, կանաչ վոտով
Յես ծաղիկ եմ անուշ հոտով
Թեև տունկս փոքրիկ է, ցած
Արտոնեբում միշտ թաղ կացած:

Բայց իմ փունջոս ամեն մի տան
Թե աղքատի, թե մեծատան
Իբրև դարնայն առաջին դարդ
Տեսնում եմ միշտ ամեն մի մարդ:

Յես եմ ծաղիկ, դարնան դուշակ
Իմ անունս ե—մանուշակ:

Խոսք.՝ Տեբ-Չեվրեդյանի
Մշակեց՝ Հովհ. Թումանյան
Յերաժշտ.՝ Միք. Միրզայանի

ԾԻՏԸ ԹՈՒՉՈՒՄ Ե

(Մեներգ IV—VI դասարան)

Ծիտը թռչում է,
Ծիտը խաղում է
Նաև յերդում.
Ծիտը թռել է
խաղը թողել է
Եւ նա չկա:

Ինչո՞ւ ծիտիկ իմ,
Ինչո՞ւ թռչնիկ իմ
Հեռու յերկրում դու
Բուն ես հյուսում
Ու նրանց համար
Յերգեր ես յերգում:

Յեկ շատ թռչնիկ իմ,
Յեկ սիրունիկ իմ
Յեկ դու մեղ մոտ.
Մենք քո անուշիկ
Սիրուն յերգին ենք
Վաղուց կարոտ:

Մեղ մոտ դարուն է,
Մեղ մոտ սիրուն է.
Յեկ շատ թռչնիկ իմ

Յեկ բուն հյուսի.
Թող ամեն վոք քո
Յերգը լրսի:

Ոոսք և յերաժշտ.
Միք. Միրզայանի

ԴԵՊԻ ՀԱՄԲԱՐ

(IV—VI դասարան)

Մենք բոլորս անդադար
Քեզ ենք սպասում, ե՛րբ ճամբար,
Մենք ունենք լող մի կարոտ,
Վոր թռչենք ու զանք քեզ մոտ:

Դու կտաս մեզ որ պայծառ,
Ծաղկադարձ դաշտ, գոլ ոնտառ
Վոր սնվենք ու խաղ անենք
Ուժ, կորով, յեռանդ ատենք:

Խոսք՝ Հենրիխ
Յերաթշտ՝ Միք. Միրզայանի

ՈՐՈՐՈՑԻ ՅԵՐԳ
(IV—VI դասարան)

Թող քեզ ծածկեմ, անդին բալա,
Որտեմ, քնի.
Որը մթնեց, լուսինն յելավ
Գիշեր ե հիմի:

Արևն արդեն զնաց հողնած,
Քնեց մոր գրկում,
Դու դեռ արթուն, յերեսդ բաց,
Խոսում ես, յերգում:
Քամին մնջեց, ծիտ ու ծղրիդ
Քնել են մուշ-մուշ.
Մեռնեմ լեզվիդ, վարդ ծիծաղիդ,
Քնիր իմ անուշ:

Եզուց նորից արև կգա
Քեզ համար նոր որ,
Մութն ե, բալաս, քնիր հիմա
Քեզ որոր, որոր:

Խոսք՝ Գ. Մեյսյանի
Յերաթշտ՝ Գ. Գեղարեկի

(V—VI դասարան)

Քնի՛ր, իմ մանկիկ, քնի՛ր,
 Քնեցին դառնուկ, արտուտ,
 Նիրհեցին աշղի, սլարաեղ,
 Եւ չի բղղում և մեղուն,
 Լուսինը արծաթ շողով
 Նայում է սլառուհանից.
 Քնի՛ր, արծաթ շողի մեջ,
 Քնի՛ր, իմ մանկիկ, քնի՛ր.
 Քնի՛ր, քնի՛ր:

Ոյ է յերջանիկ քան դու,
 Միշտ զվարթ ու միշտ անհոգ.
 Առջևդ շատ մրդեղեն,
 Լծված կառքեր, խաղալիք,
 Ամեն ինչ կաղմ և սլառաւտ,
 Միայն թե մանկիկս քայլեր.
 Ի՛նչ պիտի դառնա հետո,
 Քնի՛ր իմ մանկիկ քնի՛ր.
 Քնի՛ր, քնի՛ր:

Յերաժշտ.՝ Մոցարտի

(II—IV դասարան)

Յես ծաղիկ եմ մայիսի զարդ
 Ծաղիկներում բուրալի,
 Ինձ սիրում է ամեն մի մարդ
 Յես հոտ ունեմ դուրալի.
 Թե իմանաք յես ո՞վ եմ.

— Դու ծաղիկ ես ալ ու ալլան,
 Ծաղիկների արդ ու զարդ,
 Ո՞վ չգիտե քեզ, աննման,
 Ա՛յ աննման կարմիր վարդ:

Հենց յի՛ր կդա անուշ դարուն,
 Կրծքին բազմած յես կղամ
 Իմ ատլասիկ թերթիկներուն
 Կայույու կապույու գուլն կտամ.
 Թե իմանաք յես ո՞վ եմ:

Սնդակ զանդակ քնքուշ ծաղիկ
 Սպիտակի հետ կապույուտիկ,
 Դու հասմիկն ես շող ու շաղիկ
 Թերթիկներդ կապույուտիկ:

Խոսք՝ Ա. Խնկոյանի
 Յերաժշտ.՝ Ա. Մանուկյանի

ԾԻՏԻԿԻ ՈՐՈՐՔԸ

(V—VI դասարան)

Կախված ե ճշողից ճոճը ծխտիկի.

Փրչի՛, հովիկ, փրչի՛,
Ճոճն որորվի, տանի բերի
Նանի՛, ծխտիկ, նանի՛:

Ծխտիկը անուշ յերազ ե տեսնում.

Փրչի՛, հովիկ, փրչի՛,
Ճոճն որորվի, տանի բերի,
Նանի՛, ծխտիկ, նանի՛:

Բայց տե՛ս, ծխտիկը քնիցը չը դարթնի

Կամաց փրչի, կամա՛ց.
Ճոճն ել զղուշ տանի բերի.
Նանի՛, ծխտիկ, նանի՛:

Խոսք՝ Հովհ. Թումանյանի
Յերածչտ. Ա. Մանուկյանի

ՄԱՅԻՍ

(IV—VI դասարան)

Գարնան անդրանիկ այս ուրախ որին
Դուրս յեկեք խումբ խումբ բանվոր
ընկերներ,
Վողջուն դուք տվեք մեր դաշտ ու
ձորին
Յերդեցեք ազատ տոնական յերդեր:

Ծափ ծափ ծափ տվեք դարունը
դուլեք
Ծաղկե փնջերով մայիսը տոնեք:

Խոսք՝ Հ. Հակոբյանի
Յերածչտ.՝ Դուրդեն Միրզոյանի

«Պիոներակ. յերգարի ժողովածու»

Մ Ա Յ Ի Ս Ը Կ Ա Ր Մ Ի Ր

(IV—VI դասարան)

Ալ դրոշը ձեռքին, ալ վարդը կրծքին
Մայիսն ե գալիս գլարթ ու կայտառ
Նոր թափ ե բերում, յեռանդ ե
բերում

Ամբողջ աշխարհի բանվորի համար:

Տրա լա լա լա լա լա լա լա

Ձան կարմիր մայիս:

Կրկնել

Ահա յերգերով, ուրախ շարքերով
Յելել են նրանք մայիսի առաջ
Սարսուռ են, դողում նրանց կուռ
ուժից

Ամբողջ աշխարհի բուրժուժը
կատղած:

Տրա լա լա լա լա լա լա

Ձան կարմիր մայիս:

Կրկնել

Քայլենք համարձակ բանվոր

ընկերներ

Բուրժուժը վաղուց իր սրն ե լալիս.

Շուտով պիտ ծագի ամբողջ

աշխարհում

Հսկա մի հրդեհ, կարմիր մի մայիս:

Տրա լա լա լա լա լա լա լա

Ձան կարմիր մայիս:

Կրկնել

Խոսք՝ Հ. Հայրապետյանի

Յերաժշտ.՝ Միք. Միրզայանի

(V—VI դաաարամ)

Թող զնդա ուժգին պողպատ մուրճը
մեր,
Թող կայծերը շեկ փռվեն շուրջը մեր
Մեր թևերը պլրիլ, կամքը մեր ամուր
Կոմունա յենք մենք աշխարհով
Հանուր:

Դարբիններ ենք մենք՝ տխտան հիմի
Արփիններ ենք մենք հզոր ի մի:

Դե՛, զարնենք սալին հալալ մեր
կաթը,

Դե՛, ծեծենք արագ կարմիր
յերկաթը,

Մեր մուրճի զարկով համաչափ
մեկ-մեկ

Արևներ փռենք աշխարհում
հեղ-մեկ:

Դարբիններ ենք մենք՝ տխտան հիմի
Արփիններ ենք մենք հզոր ի մի:

Խոսք՝ Ազատ Վշտունու
Յերաժշտ.՝ Մեք. Միրզայանի

(Սույն յեկ խմբերգ, III—VI դաաարամ)

Վողջույն Բադու բանվորական,
Վողջույն ուրախ մեր առավոտ,
Վողջույն արև ապրիտական
Արև հսկարա և հեռավոր:

Սրտումս տոն ու խնդում ե,
Սրտումս տոն ու խնդում ե,
Առավոտը վառ ժպտում ե,
Սրտումս տոն ու խնդում ե:

Վիշկանների կյանքը հեռվում
Վողջույն բանակ բանվորական
Ծխնելույղներ բարձրականգուն
Յեկ հաղթական և անխորտակ:

Սրտումս տոն

Վիշկաներում կյանք են կերտում
Վիշկաններում մեր բանակն ե,
Սոցիալիզմի հիմքը զնում
Վիշկանների մեր բանակը:

Սրտումս տոն

Վողջույն բանակ բանվորական
Վողջույն ուրախ մեր առավոտ,
Վողջույն արև սալկտական
Արև անմար ու փառավոր:

Սրտումս տոն

Խոսք՝ Ալազանի
Յերածչո՛ւ՝ Միք. Միրզայանի
«Նոր կենցաղի յերգեր»

Ջ Ա Ղ Ա Յ Ո Ի Մ

(VI Դասարան)

Ջաղացողանի վողջ կյանքն
Անդուլ շարժում է

(2 անգամ) :

Լավ չե, թե վոր Ջաղացողանը միշտ
Իր տանը զուր անդործ նստի,

Իր տանը (4 անգամ) :

Այ ջուրը քեզ լավ որինակ
Այ ջուրը

(2 անգամ) :

Առանց վոջինչ արխոսալու
Խայտում է նա հոսում հեռու,

Խայտում է (4 անգամ) :

Շարժվում են անիվներն

Արադ շարժվում են.

(2 անգամ) :

Թնդում թափով, հանում հառաչ
Ուղում են միշտ դնալ հառաչ,


Ուղում են (4 անգամ) :

Գարն ել ե միշտ պտուկտ դալի,
Գարն ել ե
(2 անգամ) :

Ինչու նա յետ պիտի մնա,
Ամեն ինչ յերբ հառաջ դնա,

Ամեն ինչ (4 անգամ) :

Բանաստ.՝ Մյուլլերի
Թարգմ.՝ Հակ. Հարությունյանի
Յերափշտ.՝ Շուրեթի



ՅԱՆԿ

I ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

1. Ինտերնացիոնալ	5
2. Դուռ դուռ դնալի	7
3. Անվան ընկեր	9
4. Վարչախոսական	10
5. Դեպի մարտ դիմենք	11
6. Ե՛ր, մարտիկներ	12
7. Կոմիտեներն	13
8. Հոռուտ. շահագործների քայլերդ	16
9. Յերիս գլխադի	18
10. Կիմ աշխարհ	19

II. ԲԱՆԱԿԱՑԻՆ ՅԵՐԳԵՐ

11. Կարմիր դիմադր	23
12. Պատիկ կարմիր բանակային	24
13. Գյուլը կերթաս	25
14. Բանակ դնալ	26

III. ՄԱՍՍԱՑԱԿԱՆ

15. Գարնանացուն	29
16. Ծլել ե արտ	30
17. Արտերը ճլել են	31
18. Մեր արտերում	33

19. Զոռն բամբակ	34
20. Աշխարհում մեկ	35
21. Արևն յելավ	36
22. Մեր կուխովի արտերը	38
23. Արտերը	39
24. Կառուցողներ	41
25. Տրակտորի յերդը	40
26. Անմար մնա	42
27. Ալաճեն բարձր է	43

IV. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՐԹԻ ՅԵՐԳԵՐ

28. Բլիզադներ	47
29. Եթեկուրսիս	48
30. Մենք յերգում ենք	49
31. Իհե՛յ պիտներ	50
32. Դե՛, չուտ մեր շաբաթը	52
33. Հե՛յ, վոտքի յելեք	53
34. Նիդախ մենք գինվորներ	54
35. Իմ մատրոս տղա	56
36. Լենինի ուղին	57
37. Մայիսյան յերթ	58

V. ԹՈՉՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

38. Յերեք փխիկներ	61
39. Փխոն	62
40. Փխիկ-փխիկ	63

41. Փխոն ու մակը	64
42. Անբախտ փխոն	65
43. Փխիկ	66
44. Շուշը	67
45. Դորտիկ	68
46. Սաղիկ-մաղիկ	69
47. Ունեք-չունեք	70
48. Զընդըլ-զընդըլ	72
49. Եծիկ	73
50. Հինգ եծ ունեմ	74
51. Զալ ու չալտիկ	75
52. Հո, հո, յեղ ջան	76
53. Փնջիկ կովիս	77
54. Յես սիրում եմ	78
55. Միտիկներ	79
56. Միծեռնակի բույնը	80
57. Սաբյակները	81
58. Լորիկ	82
59. Կաքավիկ	83
60. Կաքավիկ	84
61. Թիթեռ	86
62. Մեղու	87
63. Պզան-պզան	88

VI. ՏԱՐՎԱՆ ԵՆԴԱՆԱԿՆԵՐ

64. Աշուն	91
65. Զան աշուն	92
66. Աշնան վերջը	93
67. Մառը մեքիկացալ	94
68. Բարև ձմեռ	95
69. Ահա ձմեռն անցնում է	96
70. Ե՛րբ, ջան, անցան	97
71. Արև	98
72. Փիտիկի դանդաղ	99
73. Գարուն	100
74. Գարուն	102
75. Գարուն յեկալ	103
76. Յեկալ դարուն	104
77. Դեռ ուր է ծիծառ	105
78. Մայիս	106

VII. ԽԱՌՆ ՅԵՐԳՆԵՐ

79. Մանկահան անկյուն	109
80. Լենին պապին	110
81. Փոքրիկ պաշտպանները	111
82. Տիկնիկ	112
83. Չարաբ	113
84. Դանդանի	115
85. Ծափիկ-ծափիկ	116

86. Փայտե ձի	117
86. Առողջ սերունդ	118
87. Արև, արև	119
88. Դարբիններ	120
90. Տրակտոր	121
91. Բրբի տոն	122
92. Բերքահավաք	123
93. Բամբակի արտերը	124
94. Պիտներ Մոսկն	125
95. Կարմիր վարդիկ	126
96. Յերգ կառուցման	127
97. Շողերին	129
98. Լուսին	130
99. Այսոր բոսոր	131

VIII. ԿԱՆՈՆՆԵՐ

100. Թեթև ու թեթև	135
101. Ոբոր	136
102. Զուգլած-զարդարված	137
103. Զուկն է լողում	138
104. Քայլերդ	139
105. Մարի Լանջը	140


IX. ԺՈՂՈՎԱՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

106. Զուլո	143
107. Ո՛յ մարալ	144
108. Զան գյուլում	145
109. Հոյ Նազան	146
110. Աբադիլ	148
111. Ինչո՞ւ Բինգյուլը մտար	149
112. Կոտ ու կես	150
113. Շողեր	151
114. Լուսակն անուշ	152

X. ՄԵՆԵՐԳՆԵՐ ՅԵՎ ԽՐԵՐԳՆԵՐ

115. Սև կաքավիկ	155
116. Վայրի ծաղիկ	156
117. Աղվեսը	157
118. Վարդը	158
119. Տույ, տույ	119
120. Յեպլի	160
121. Մանուշակ	161
122. Ծիտը Բուշում հ	162
123. Դեպի ճամբար	164
124. Որորոցի յերգ	165
125. Ոբոր	166

126. Ծաղիկների յերգը	167
127. Ծիտիկի որորգը	168
128. Մայիս	169
129. Մայիսը կարմիր	170
130. Դարբիններ ենք մենք	172
131. Հանդիպում	173
132. Զաղացում	175



20762

31

ՀՀ Ազգային գրադարան



NL0404829

1

3514

RECEIVED

RECEIVED

RECEIVED